

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(ԳԱՂՈՒԱԾՔ)

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԿՈՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐՈՒՑ Ս. ՄԵՍՐՈՒՄԱՑ

Քաղաքային հարթն մեր ի յոյս բնծայելով 1833 թ. Կորեան պատմությունը, և տեսնալով որ ի ձեռին ունեցած օրինակները «լիսն քնառ ի վրիպանաց զերծ» ուղղել են ի ստորեւ իւրից ժանրութեամբ «զյայտնի քուեցեալսն» իսկ տարակուսականները յանձնել են «ժամանակին»։ Բարի ժամանակն հնարաւորութիւն տուաւ մեզ ըստ մեր կարի ուղղել յայտնի վրիպակ երեւցածները, իսկ տակաւին մուր մնացածները՝ մեր եւս յանձնեմք ժամանակին և բանաւորաց։ Այս առիւ հարկ համարեցանք այլեւ անցնել Նորայր Բուզանդացու քննական երկասիրութիւնը «Կորիւն վարդ» և Նորիւն քարգմանութիւնը»։ Թիֆլիզ 1900։ Բարգելի գիտնականի մի քանի կարեւոր ուղղութիւնք ընդունելի մեզ քուեցան, իսկ են այլք ումանք՝ վերատուգոտեան կարտաւ Կորեան հետ առնուաբիւն ունեցող հեղինակներից օգտուեցանք այն լափով, որչափ անհրաժեշտ էր աղաւաղած քառք հասկանալի առնելու։ Փերականական և չեզոքական շեղումները՝ են որ տգէտ ընդօրինակողների երեւոյց են, և են որ սկզբնագրիկ պետք է վերագրել։ Ըստ մեզ դասական մասնագրաց չեզոք և ուն ի գործածութեան և դաժ է ժողովրդի կենդանի բարբառով։ հետեւապէս ամեն գրիչ որչափ և կամեցնել է պատկառ կաշ կեդրոնական գաւառների յստակաբանութեան, այնուհանդերձ իւր սեփական և գաւառաբարբառ րոպի են իրենց աղբիւրքեան հետքերը, ըստ այսմ բացատրելու է Կորեան չեզոքական շեղումները։ Կորիւն յարդարելու համար՝ քննադատութեան մի ուժեղ ժանրոցի տակէն անցնելու պետք կայ, մինչև որ ուղղութիւն թէ չեզոքական և թէ կիսադրութեան վրիպակները։

Էջ 1. տող 4. «Աստուածեղէն շնորհս երեւցաւ»։ Ուղղ. շնորհն։

Էջ 1. տող 8. «Խորհրդանոցի մտացն»։ Ուղղ. մտացս, որովհետեւ միայնագործ ինքն հոգացաւ առանձին իւր մտքով և իւր մտաց մէջ՝ գրել իւր վարդապետի վարքը։

Էջ 1. տող 10. «Հոգացայ. եկեալ»։ Ուղղ. հոգացայ, եկեալ։ Հոս միջակէտ անյարմար է։

Էջ 1. տող 12. «Առն այնորիկ. և ընդ նմին»։ Ուղղ. ջնջելով միջակէտը։

Էջ 1. տող 12. «Եւ ընդ նմին այլոց եւս քաջաւերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան»։ Թուի ուղղ. մերոյն վարդապետի։ Թէպէտ իբրեւ աւրուեստ առած Մեծորայ ուսումը՝ յարմարի ասել մերոյն վարդապետութեան. բայց որովհետեւ աստ նա մտածել է գրել նորա վարքը, ուստի խօսքը անհիմ վերաբերելով, յարմար Թուի լինել զբաժ «վարդապետի»։

Էջ 1. տող 13. «Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ»։ Ուղղ. աշակերտութեան վիճակեալ։ Բայց կայ մտքի միւս եւս իմաստ այսպէս. «Ուստի և ի մասնաւոր աշակերտութեան վիճակեալ»։ Հաւանական Թուի որ ի նախդիրը, ընդօրինակողի անուշադրութեամբ «մասնաւոր» թէ մեկի հետ կցուելով կազմուել է իմ դերանունը. մինչդեռ Կորիւն ասել է որ ես եւս մասնաւոր այսինքն առանձին

խնամոց վարդապետին արժանացել էի, թէպէտ կրտսեր դասուն կը պատկանէի, որոյ վրայ բնականաբար Մեհրորայ խնամքն համեմատաբար սակաւ եղած լինելու էր:

Էջ 1. տող 14. « Թէպէտ և էի կրտսերագոյն և առաւել քան զկար մեր. գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ »: Ուղղ. « Թէպէտ »-ն առջեւի միջակէտն փոխել ստորակէտ. և ապա եւս առաւել. « զկար մեր »: ջնջելու է միջակէտն: Ուրեմն այսպէս « վիճակեալ, թէպէտ և էի կրտսերագոյն՝ եւս առաւել քան զկար մեր անաչառ հրամանին հասելոյ »:

Էջ 2. տող 1. « Ձորս և մեր համօրէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղօթիւք »: Ուղղ. « երգախառնել »: Ըստ այնմ՝ սաղմոսիւք և երգովք հոգեւորօք օրհնել զԱստուած:

Էջ 2. տող 24. « Եւ միւս ոմն բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն, հանդերձ ամենայն շնչականօք տարեւոր ժամանակօք նաւակօք պահեալ »: Ուղղ. « Նաւագնաց պահեալ »: Տապաանն (նաւակն) բարձրացաւ և շրջէր տապաանն ի վերայ ջրօք »: Խնդ. է. 18. Նոյ որպէս թէ ըստ կամս նաւարկէր. մինչեւ ցածացան ջրերը և կանգնեցաւ տապաանն:

Էջ 2. տող 31. « Բազմօք և այլ նոյնպիսիք աստուածածանօք »: Ուղղ. « Բազումք և այլ »: Համեմատութիւն մ'է. որպէս Աբրահամն հաւատով եղաւ դաշնաւոր Աստուծոյ, այսպէս և այլ բազումք նոյնպիսիք եղան, որոնք յայտնի են մեզ Ս. Գրքէն:

Էջ 2. տող 37. « Նա և գծանտագործին Բահարու զհիւրընկալութիւն լրտեսացն համեմատեալ »: Ուղղ. դրուատեալ. աստ հեղինակն ակնարկէ Պօղոսի Հերբայեցոց թղթի ժԱ զլուխն ուր Նաւապետաց հաւատքը կը գովէ ընդ նմին և Բախարու հիւրընկալութիւնը:

Էջ 3. տող 3. « Անբաւական գծամանակն առ ի կարգի պատմելոց: Ի կիրարկանէ այնուհետեւ նշանակել միանգամայն գփորձութիւնս ի վերայ յարձակեալս, և

նոցա զանընդդիմակաց զնահատակութիւնն, զորս և պատուականս քան զախարհս առ վաճառ համարի »: Ուղղ. « հաւարեալ » առ ի կարգին (կամ կարգաւ) պատմելոյ՝ ի կիրարկանէ... քան զախարհապաճառս համարի »: Ի վեր պակասի իմն և լրացնելու համար հարկեալոր թուի յաւելուլ « համարեալ »: Իսկ երկրորդն ալ նարկութիւն է քանից Պօղոսի կորթն. թղթ. և Հերբայեցոց զԱ. ժԱ 32-40, ուր ասն նաեւ « զորս ոչ արժէ աշխարհս », որպէս թէ վաճառ ինչ է գնոց գնելի:

Էջ 3. տող 10. « Եւ զամանց ըստ աշխարհագրի կարգաց՝ զմարտից », և այլն: Ուղղ. ըստ աշխարհադիր կարգաց? հմտ. աստուածադիր օրինաց էջ 4. տ. 7. տ. 26 զքրիստոսադիր կարգաց կամ թէ աշխարհակիր օրինաց: Թէպէտ իմաստն մեծ զանազանութիւն չունի, աշխարհագրի կամ աշխարհադիր, կամ աշխարհակիր. աւելի գործածականք յետինքն են՝ պատշաճ հեղինակին մտքին:

Էջ 3. տող 12. « Որպէս զհերբայեցոյն, և զվաճառեանն և զԳաւթայն »: Ուղղ. զՅիսթայեցոյն: Դարձեալ Պօղոսի թղթոյն ակնարկութիւնք են, ուր կը պատմէ Նաւապետաց առաքինութիւնք որոց հետ Նեքրոս ոչ մի կապ չունի, որ իրեւ ամբարիշտ մէկն յայտնի է Ս. Գրքէն:

Էջ 3. տող 16. « Թորոց և հզօր թազաւորացն խրատիչք էին »: Ուղղ. զոռոգ?

Էջ 3. տող 23. « Եւ ոչ այսչափ միայն այլ և հոգեկան ազգին հրեշտակութեամբ գովեալ զորոյն զօրութիւն որ զԳաւթիէլ »: Ուղղ. « հրեական. զարօրն »: Պէտք է ընդունինք որ « հոգեկան ազգն » անարմին զուաթունք են, քայց հեղինակիս ասածները չեմ յիշեր ո՛ր զօրուած են՝ մանաւանդ Տիրամօր գովեստը, որ մաս մի կայ յողջոյնատրութեան հրեշտակին և միւսն Եղիսարէթի: Իսկ Գաւթիէլի համար ինքն ասէ. « զորոցն և մարգարէիկն իսկ գովեալ գիմաստութիւնսն »: Եթէ գովողն լինի մարգարէն և ոչ « հրեշտակ »՝ « հրեական » պիտի և ոչ « հոգեկան », թէպէտ միւսն եւս ճշգրիտ իմաստ ունի յինքեան:

էջ 3. տող 27. « Բայց զի՞նչ ասիցեմք զդռանացն զառ ի միմեանց պտտոտեալ զգո՜վութիւնս զորոց և Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոյշր զազնուականութիւն » : Ուղղ. « զսուրբ արանցն կամ զերանելեացն. պատմեալ... զովք » : Սուրբ մարդիկ՝ նա՜հապետք և մարգարէք՝ խօսելով և զրեւելով միմեանց վրայ՝ պատմել կրնային գովութեամբ. և ինքն Տէրն յաւետարանին մերթ հարկւրապետին մերթ քանանացոյն հաւատքը բերանալիր կը գովէ, չմոռանալով նաեւ գտնիրաւ տնտեսը : Հմմտ. էջ 3. տ. 17 « յօրինէ զգովութիւն » էջ 4. տ. 8. « յիշատակել գերանելի անուանց գումարութիւն » . էջ 4. տ. 15 « զովէ և զհաւատաց » . էջ 4. տ. 24 « զովէ զայրեացն զյօժարութիւն » . էջ 5. տ. 9. « և զուրումն նշանակէ զգովութիւն » . էջ 5. տ. 23. « որոց զյօժարութիւն պատմեալ » . էջ 6. տ. 7. « եթէ զովութիւն ամենայն աստուածաւէր ընտրելոցն » . էջ 6. տ. 15 : « Ունիմք և զկանոնական յաշնորդեալ յառաքելոց անտի շնորհապատում գրեալսն, եթէ որպէս մեծարեալք ի միմեանց, գովեալք ըստ ճշմարիտ հաւատոյն », և այլն :

էջ 4. տող 18. « Բայց ոչ միայն զմեծամեծան, այլ առաւել եւս զթեթեւագոյնսն բարձրագոյնս անարգամեծարն Քրիստոս. որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարգե՛ » : Յաւել. « բարձրագոյնս ցուցանե՛ » . Հմմտ. « մեծ գնահատոցն ասէ » . « զովէ զայրեացն զյօժարութիւն », և այլն. անդ :

էջ 4. տող 22. « Եւ զկնոջն քանաւնացոյ մեծ գնահատոյն ասէ. նաեւ զգանագաց երկուց ընծայելոցն՝ զովէ զարեացն զյօժարութիւն առաւել քան զմեծացն » : Ուղղ. « զայրեացն, քան զմեծաստանցն » : Երկու դանկ տուող այլի կինն էր աղքատ, որոյ տուրքը կը մեծացնէ քան անոնցը՝ որոնք յաւերթոյց իւրեանց կը ձգէին գանձանակը, և էին մեծատուրք :

էջ 4. տող 36. « Եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զբաշտութիւնս տեսանել զոմանց ի սուրբ աւետարանին և զոմանց ի գործս

առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ » : Ուղղ. որպէս է տեսանել :

էջ 5. տող 5. « Այլ սրբոյն Պաւղոսի » : Ուղղ. « Այլ և սրբոյն Պաւղոսի » : Այսինքն առաքեալք ըստ օրինակի Տեառն գովում են իրենց ընկերակցաց քաջութիւնները, ինչպէս Ղուկաս՝ Թէ Աւետարանի և Թէ Գործք Առաքելոցի մէջ գրած է. բայց կան որ աւելի ծանօթ են կաթող. Թղթերէ. (Յակոբոյն, Յուդային և Յովհաննոս). բայց Թող զայսոսիկ այլ և սուրբն Պաւղոս իւր 14 Թղթերի մէջ կը գովէ « զիւր առաքելակիցս, և զնիզակակիցս և ուրախակիցս իւր առնէ » :

էջ 6. տող 2. « Սրբաւէր տեղամբն » . Արդեօք « սրբասէր տեղամբն » ? Իմա Յոր երանելեալ, որոյ համբիւրութիւնը օրինակ կու տայ Առաքեալն քրիստոնէիցի :

էջ 6. տող 21. « Եւ արդ ատեալ յերկրոցն համարձակութիւն ի գիր արկանել և զվարս առն արդարոյ, արդ այսուհետեւ և խոստացեալն առաջի դիցի. և հայրենապատար մեծարեալ պայմանաւ, որ առ ի մէջ հաճեցի, և նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զորպարեցի » : Ուղղ. « Եւ արդ ատեալ յերկրոցն համարձակութիւն ի գիր արկանել զվարս առն արդարոյ, արդ այսուհետեւ խոստացեալն առաջի դիցի, և հայրենապատար մեծարեալ պայմանաւ որ առ ի մէջ՝ հաճոյացի, և նոցա քաղցրատուր հրամանն հատուցեալ յարդարեցի » . — Փոխանակ և երկրոցնիցի ողորդ և երկցանց ու անոր համար որ ի սկզբանն մինչ ինքն տատամեալ, երկիւղ կրելով դեռ մտորումներ լինէր և եկեալ հասանէր (առ նա) հրաման առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ. և ընդ նմին այլոց եւս քաջակերութիւն » . Ս. Մեարութայ աշակերտք բոլոր, բայց ի մասնաւորի Յովսէփ և Ղեւոնդ և երէց ու կոչին, հետեւապէս եթէ սոցա համար ձեռնարկում է զերկ ուրեմն ոչ և երկրոցն ու այլ և յերկցանց ու Եւս հմմտ. էջ 11. տ. 15. « վասն որոյ հառեալքս յարգարին » :

էջ 6. տող 37. « Տեղեկացեալ և հմուտ

եղեալ աշխարհակաց կարգաց ու Սրգեօք աշխարհականն ?

Էջ 7. տող 3. « Եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ՝ հարկանէ զիշխանացն սպասաւորութիւնն ու Ուղղ. « արկանէր ու հրաժարելու մտքով աշխինքն ձգեց իշխաններու ծառայութիւնները. մինչ « հարկանել ու զեռ ծառայելու իմաստն ունի, որ ընդդէմ է մտաց մատենագրին :

Էջ 7. տող 7. « Մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնն. և առեալ զիսաչն պարծանաց ու Ուղղ. զաշխարհականն. այս ըստ բնական իմացութեան այն ամենուն համար որ աշխարհական ցանկութիւնը մեղսելով՝ խաչի պարծանաց հետամուտ լինին. բայց թերեւ Ս. Մեսրոպ ոչ միայն սոսկական աշխարհիկ էր, այլ և գուցէ իշխանազուն, վասն որոյ նա հրաժարուով է իշխանական կոչումից, պատուից, բարձից, որոնք իշխանակիր ցանկութիւնը են, և այլն :

Էջ 7. տող 28. « Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր ըստ աշակերտաց հաւատոյն Գրիստոսի ու Ուղղ. աշակերտական, որպէս աշակերտած հաւատոյն Գրիստոսի :

Էջ 8. տող 1. « Նոյնպէս առաւել հոգի մտի արկանէր, զհամաշխարհական սփոփելով ու Ուղղ. « զհամաշխարհի գիրս ստեղծելով ու, այսինքն՝ առ ի ստեղծել Ս. Մեսրոպայ հոգն էր առանձին գիր ստեղծել հայերէն լեզուին, և այդ պէտքն շատ աւելի զգալի և անհրաժեշտ կը տեսնուի երբ իւր առաքելութեան ճանապարհորդութիւնը կը կատարէր, ուստի այդ համօրէն աշխարհին գիր ստեղծելու հոգին նեղուած դիմում է Ս. Սահակի օգնութեան և խկոյն կը ժողովին աշխարհաճոց խորհուրդ, այդ ցանկալի զրոց գիւտի հնարքը մտածելու :

Էջ 8. տող 19. « Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանագրոց Հայաստան ազգին, հասանել բազում հարց

փորձի. և քննութեան զանձինս պարապեցոցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ ու Ուղղ. « Հայաստան ազգին հասանաւել. բազում հարց փորձի և քննութեան ու Աշխարհահոգ գումարուած ժողովն նպատակ ունէր գիրս նշանագրոյ հաստատել, ուստի բազում հարցփորձի և քննութեան մտնելէն յետոյ, անհրաժեշտութիւնն կը ստիպէ դիմել թագաւորի օգնութեան :

Էջ 8. տող 27. « Յայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ոտնովն նշանագիրս աղփարետաց հայերէն լեզուի : Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէն ու Ուղղ. « որոյ յանկարծ ունէր... վասն գտելոյն (կամ գրելոյն) ի Դանիէլէն : Վաւարապուն կը պատմէ թէ ինչպէս Դանիէլ ասորին յորինէր էր և ունէր հայերէն նշանագրեր. կամ թէ « յանկարծ ուր է անկարծելի կերպով մը ունէր հայերէն աղփարետը : Ուստի թագաւորի պատմելէն զկին Դանիէլի կամ զբաժնի կամ զգրբի մասին, ապա աղաչեցին թագաւորին մարդ ուղարկել այդ պիտոյից համար : Նոյն իսկ Ս. Մեսրոպը գրեւոր ստեղծելէն յետոյ՝ մատենագիրս կը գրէ « միանգամայն յորինեալ և յանկարծեալ ու, էջ 10. տ. 17. — միւս եւս « զյանկարծագիտեալ ու, էջ 9. տող 6 :

Էջ 9. տող 5. « Առեալ երանելի հոգաբարձուաց զյանկարծագիտեալ, խնդրէին հայցէին եւս յարքայէ մանկունս մատապ, որով զնշանագիրսն մարքեցնեցն » : Ուղղ. « որոց զնշանագիրսն մաղթեցնեցն : Ծարօրի նակ է մաղթել բառը առնուլ իբրեւ « մարգել և կրթել ու նշանակութեամբ. բայց (չլիշեմ ո՛ր) ընթերցեալ եմ որ « մաղթելն ու ունէր սովորեցնելու, աւանդելու նշանակութիւն որպէս առաջիկայ ընթերցուածի մէջ :

Էջ 9. տող 13. « Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց զպրութեանց Գաղտալք և յարացեալք դիպեցան ու Ուղղ. « յայլոց զպրութեանց

քաղաքը և յանկուցեալք դիպեցան ։ Յառաջն տեսանք որ Դանիէլեան նշանագրերոյն համար կը գրէ և յանկարծ, կամ յանկուցեալ ունէր ։ ուրեմն ժողովածոյ իմէ էր ։ Արդ երկուսն ալ աշխարհի փորձն ցոյց տալիս է որ նորա բաւական չեն և ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուոյն ։ որովհետեւ Դանիէլեան նշանագրերը ուրիշների դպրութեանց քաղուած և յարմարեցուցած մի բան էր . և ոչ՝ ինչպէս ուսանք կը հասկանան՝ ուրիշ դպրութեանց մէջ քաղուած և Մեսրոբայ ժամանակ յարաբիւն առած ։

էջ 9. տող 32. « Իսկ աշակերտասէրն վարդապետին յասորի դպրութեան կարգէր ։ » Ուղղ. դպրութիւն ։

էջ 10. տող 4. « Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն խորով, նշանագիրս հայերէն լեզուին ։ » Ուղղ. հայկական չափուն (լեզուոյն ?) ։ Մեսրոբ իւր սուրբ աջովն հայկական լեզուի նշանագիրները կը ստեղծէ, որը բնաւ կապ չունենալով Դանիէլեան նշանագրերու հետ, ուստի մատենադիրս կ'անուանէ և ծնունդս նորոգ և սքանչելի ։

էջ 10. տող 37. « Յորոց բողոքս աւետազիրս հանդերձ շնորհատուր պարգեւս ։ » Ուղղ. Յորոց ընկալեալ (կամ առեալ) թուղթս, և այլն ։ Մեսրոբ զորոց գիւտէն յետոյ և Սամոստացոց ։ եպիսկոպոսներէն թուղթ առած կու գայ առ Եպիսկոպոսն Ասորեոց, յորում առած կը լինէին որ ինքն Մեսրոբը գտաւ և զնշանագիրն աստուածատուր ։ Իսկ Ասորեոց եպիսկոպոսներն եւս տոած կը լինեն մի թուղթ, յորում բացատրած են Մեսրոբայ արդիւնքը և աւետիս կը զրկեն Հայոց Կաթողիկոսին և Թագաւորին ըստ այնմ և յորոց ընկալեալ թուղթս աւետազիրս ։ աւետազիր չէին զրկեր Հայոց աշխարհը, ի՞նչ Մեսրոբայ գտածն նոյն կամ նման լինէր Դանիէլեան նշանագրերոյն ։

էջ 11. տող 24. « Որով թերեւս ստգոսահիցեմք ։ » Ուղղ. և ստգոսանիցիմք ։

էջ 11. տող 31. « Եւ արդ եկեալ յիշիւն մերձ ի Թագաւորական քաղաքն ։ » Ուղղ. Երանելիս Անտոնիէ և յիշելի ։ ուղղ. անկարկելի ի սուրբն Մեսրոբ, մինչդեռ պատմութեան թելի հետ հեղինակս կը գրէ և իսկ այսր երանելոյն ։ տող 15. « պատահէին երանելոյն ։ » տ. 34. համտ. էջ 14. տ. 5, էջ 16. տ. 39. և այսպէս անվերջ մինչեւ ցվերջ բանին ։

Հ. Գ. ՆԱԼԱՅԱՆ

Շաքաշաքի

Հ Ի Ն Դ Ե Մ Ք Ե Ր

Մ Ի Ն Ա Ս

Գահիրէի հայկական Լսարանին

Գ.

Խոնա Չաթմաթի դուստրը. — Շահ Սէֆի Խոնա Սաֆազի կ'այցելէ. — Միմաս Զրադ խոնի դէմքը կը մկարէ. — Նկարագիր հայկական հիմնակարչութեամբ. — Շարտէժի դատաստանը պարսիկ մկարչութեամբ վրայ. — Հոգեբանութիւն Միմասի մկարմերուն. — Համարագէտ դեսպանութիւն մը. — Միմաս քաղէմ ու քաղէկորը կը մկարէ. — Միմասի յաղթանակը պարսիկ մկարչութեամբ վրայ. — Դժն կը յիշուի իր գործերէն. — Դժն ուղիմք իրմէ.

Այս գեղուն էջէն ի՞նչ մեծ քանակ մ'իսկ դուրս հանենք իբր արեւելեան աւիւնի մը ազդեցութեան տակ թելադրուած՝ դեռ մեծ քանակ մը կը մնայ իշխանական նազանք, ներուն՝ հարստութեան, վեհանձնութեան, առատածնունդութեան, յատուկ այս ընտանիքին ։ Ստոյգ է որ Եւս Արասէն սկսեալ՝ յաջորդաբար իրանի կենցաղասէր ինքնակալները ստէպ իրենց կանանցով առնց պալատները կու գային այցելելու, սթափելու, զուարճանալու և զայթելու ։ Ժամանակակիցներն առհասարակ բամբասած են Զուլայի հայուհիներն իբր պնասսէր, չարամճի և քծնող, ստէպ նախանձը կը շարժէին ամբողջ հարէմին ուր կ'երթային